


Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊԵՏԱԿ

ՆԻՊՏՈՍ
Տարեկան դրոշմը 30
ԱՐՏԱՍՏՄԱՆ
Տարեկան գրանց 10

Ռամանոյֆ ՅԱԵԼՈՒՍԵՆԻՈՒ փոխարեց
վճարում է գերծ պիտի ըլլանք .

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն . Գ Ր Ա Կ Ա Ն . Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Թ Ե Բ Բ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նիւթական խնդրոց հաւատ
պէսք է ղիւնի ինքնագործական հասցեով
բերքիս Մասակարարին, որ է՛

ԳՐԱԿԱՆ ՓԱՊԱՋԵԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանում են իրենց գրածներուն

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂՁ

ԿԱՐԵՒՈՐ ԾԵՂՈՒՅ ՍԸ

(Որ Հ. Բ. Ը Միտքեան նիւ կապ ունի)

Հայկական Բարեգործ. Ընդհ. Միութեան գործունէութեանը, արդիւնքին և ապագայ կարևոր ծրարագրերնուն վրայ խօսելէ առաջ, ներկայ «Շեղումը» իր մասնաւոր կարևորութիւնը ունի .

Միտքեան կազմութիւնը (տե՛ս Կանոնադիր երես 25) 1906 Ապրիլ 15 ին Ս. Չառլի առաջին օրուան վերադրուած է . Անշուշտ մասնաւոր նպատակ մը չկայ ասոր մէջ .

Հ. Բ. Ը. Միտքեանի իր գոյութիւնը ցոյց տուած է 1906 ի սկիզբները . Նոյն իսկ Յունուարի մէջ և քիչ մ'ալ անկէ յառաջ . Արդէն այս ամենակարևոր Ընկերութեան նախնական քանի մը գործունէութեան մէջ առիթ ունեցած եմ յիշատակելու թէ՛ 1905 ին, երբ գրամաշարի խմբակին կողմէ 60,000 ոսկիներ պահանջուող սպառնական 24 նամակները Երկրորդ հասան, Ամերիկայէն զրկուած քանի մը բարեմիտ ճեղքներու հետ, Երկրորդ հարուստը իր կարգին անտարբեր չ'մնաց, ու պէտք էր որ չ'մնար . Թէպէտև ձեռք առնուած միջոցները կարգ մը վատասերած մակաբոյժներու հացին վրայ իւր քօնը . . .

Անշուշտ յառաջիկային առիթը պիտի ներկայանայ որ ասոնց մասին իմ գիտցածներս խօսիմ առանց վերապահութեան . . .

Իսպառ սխալ է կարծել թէ՛ Երկրորդ հարուստը հայ ցաւերուն անտարբեր մնացած է . Մասնաւոր Երկրորդի մէջ . Հայ հարուստը միշտ գոյութի տրամադրութիւն և պատրաստակամութիւն մը ցոյց տուած է (տակուս), միայն թէ գողերու, աւազակներու, խաբէբաններու, դրամաշարիներու, մարդասպաններու, չի՛ տար, ու պէտք է չէ՛ որ սայ .

Իսպառ ըլլալու այդ սպաւորութիւնը չ'թողելու համար էր որ Երկրորդ հարուստը մերծեց քաշաբեր վերոյիշեալ «աւազակային» հանցանակաբաններ, և նախածար սեպեց իր իսկ ձեռքով բարբարել, և դրամ չէ՛ ըսածնիդ . Ըսաւ . կուտանք, բայց ձեզի վրատահութիւն չունինք : Ինչք մեր խելքովն ու բազումը վատակուած գրամները մատակարարելու ձեռքն հաս չէք . . .

«Ինչ կ'ըսէք պարոններ, կը գոչէր «Լուսարբեր» ի թիւերէն միոյն մէջ, Ազն. Մկրտիչ էֆ. Անդրանիկեան. դրամ տանք որ մարդասպանութեան գործածէք . . .»

Շատ ճշմարիտ էին այս խօսքերը, և ասոնին ըսուած . . .

Միւս կողմէ սակայն՝ մէկ քանի երկու տողեր իրարու քով բերելու հաւատարմութիւնը, նոյնչափ ալ խրոչնաւիս խմբակները, հայ հարուստներու ընդհանրապէս՝ իսկ երկրորդ հայ ունեւորներու նկատմամբ մասնաւորապէս բաներ մը մտածած են ու կը մտածեն, առանց անոնց հոգեբանութեանը կարեւոր թափանցելու - որովհետև այդպէս ընելու միջոցն ալ կը պակսի իրենց - բայց այդ ամենը թուղթի հերսութեանց շարքերուն մէջ մնալու սահմանուած են իսպառ .

Երկրորդ հարուստները ճշմարիտ հայրենասէրներ են կարելի է ըսել . եթէ անոնք իրենց ինչքին, ստացուածոց, պատիւին ու արժանապատուութեան պահպանութիւնը չ'կարենան ընել, ալ ինչի՞ն մարդն են : Աւ իրենց այդ արժանաւորութիւնը ցոյց տալու համար էր որ՝ «աւազակային վերոյիշեալ հանգանակութեան» երեսին գոցեցին իրենց դուռները՝ և հիմունեցաւ Բարեգործականը, իսկին ամբողջ նշանակութեամբ Լ.Ս.Ն ծրարներով, և անկեղծ ազգասիրութեան ամենաազնիւ ձգտումներով .

Թող չի ժողին ուրանալ դրամաշար - ուճրագար խմբակին ներկայացուցիչները թէ՛ 1905ին Երկրորդի մէջ անտարբեր բաներ մը ընել չէին ուզեր : Վկայի պէտքը կա՞ր . . .

Այնպիսի շատ հաւատարմ է . Գրքերէ՛ք Ամերիկայի ԱՐՄԻԻ ին 1908 ի, այսինքն այս տարուան 17 թ. թիւին պարունակութիւնը, որուն 14 թ. երեսին մէջ կը գրէ Տ. Մ. Արշակ, արժանապէս ոգորող «Արժի» ի խմբակի .

«Կնամարդիներ», կնամարդիներ, կնամարդիներ. դուք այսօր Անճեանը, Խաչանճեանը, և Արվիարեանը կ'ողբաք . բայց դուք չէք քայքայէ կարգադրողները, և սեռորներն ալ զրկողները, որ մէկ օրուան մէջ Մանչեսթրի, Գահիլէի Երկրորդի, Ամերիկայի, և Պոլսոյ հարուստներէն քանի մը հատ գետին փռէին (թուղթի պէս թափէին, ինչպէս սովոր էիք ըսել ձերներուն) և այդ թուղթի պէս թափուիլ որոշուող հարուստներուն մէկն ալ թաւաչանճեանը չէ՞ր : Արվիարեանն ալ պիտի չ'սպաննուէ՞ր 1905 ին Պոլսոյ բաշա նուագարի հետ : Անոր տեղորն ալ զրկած չէի՞ք Գահիլէ :»

ուող հարուստներուն մէկն ալ թաւաչանճեանը չէ՞ր : Արվիարեանն ալ պիտի չ'սպաննուէ՞ր 1905 ին Պոլսոյ բաշա նուագարի հետ : Անոր տեղորն ալ զրկած չէի՞ք Գահիլէ :»

Որ մինչև այսօր հոս կը սլքտայ տակաւին . . . Լիվրուլ օթելին հրատեղի ողջոյն տալ ստիպուելն յետոյ . . .

Ուրիշ վկայ ալ եթէ կուզէք, 1906ի սկիզբները Պ. Ապահ Պետրոսեանի ստորագրութեամբ հրատարակուած պրօշտրիս մէջ փնտռեցէք .

Բայց դառնանք մեր նիւթին, որ գլխաւորապէս Հ. Բ. Ը. Միութեան կազմութեանը շուրջը պիտի դառնար .

Ըսի որ 1906 Ապրիլ 15ը Ընկերութեան վարչային կազմութեան պաշտօնակալն թուականն է. Իսկ անկէ առաջ գոյութիւն ունեցած էր արդէն Հ. Բ. Ը. Միութիւնը 1906 Յունուարէն սկսեալ որչա՞ր գործունէութիւն ունէր .

Եթէ այդպէս չ'ըլլար, այս տողերը ստորագրողը՝ 1906 Փետրուար ամսոյ մէջ շրջաբերական մը չ'պիտի կարենար զրկել Արտասահմանի թերթերուն, իր հրատարակել սկսած մէկ ամենակարևոր երկասիրութեան գործերուն նկատմամբ .

Թէ ինչ էր այդ երկասիրութիւն ըսուածը . ասոր պատմութիւնը անցողաբար գիտնալն ալ անհրատեղա է .

Երուսաղէմ յ'աքտորի հանգուցեալ, Կարոյ Առաջնորդ Հոգեւոր Տէր Ղևոնդ Եպիսկոպոս Երջմանեան «Արշալոյս ի Տպարանին մէջ 1901-1902ին «ՀԱՅՈՐԴԻ» ծածկանունով «Ցաւերք Հայրենեաց» տիտղոսով ամենասիրուն հատորիկը հրատարակութեան տալէն յետոյ, թերթին այն ստեղծուան Տնօրէն Տիար Եղիշէ Թորոսեանին զրկած էր կարգ մը խիստ կարևոր և ազգային տեսակետով շահեկան թուղթերու հետ, 917 էջիք բազկացած երկու հատոր իՄ ԱՐՄՈՐԻ ԿԵՆՏՐՈՆ» անունով ընտիր երկասիրութիւն մը՝ Արշալոյս ի մէջ իբր թերթի հրատարակուելու համար .

Հոգեւոր և բազմաչափ հեղինակը, իր նամակներէն մէկովը՝ ի մէջ այլոց հրահանգ կուտար որ, եթէ առանձին հատորով լոյս տեսնէր այն, անոր արդիւնքն կարենար գուճար մը յատկանար Բարեգործական նպատակներու .

Հանգուցեալ Գերապատիւ հեղինակին Գրական, Պատմական, Տեղագրական, Նկարագրական և այլ ամեն տեսակետներով գերազանցապէս օժտուած այդ չ'քնաղ երկասիրութիւնը, որ հեղինակին անմասն կարողութիւնը և հագուազիւտ հրատարակելու կը ցուայնէր իրեն մէջ, փոխանակ թերթի մէջ հրատարակելու՝ և անոր կարևորութիւնը պարկեցնելու, առանձին հատորով հայութեան ընծայելու համար այդ սասը տարիներու անդուլ և քրտնաջան երկանց ու վատտիոց արդիւնքը, 1906 Յունուարին հրատարակելու ձեռնարկեցի : Եւ մինչև վեց պրակներ ալ տրուեցան հանրութեան ձեռքը .

Իսկ որովհետև Հոգեւոր Տէր Եղիշէին կամքն էր պարեզ գուճար մը Բարեգործական նպատակներու տրամադրել, ուստի իր տեսակին մէջ իբր միակը և իբր ամենէն ապահով և վստահելի ձեռքերու մէջ գրտնուած Ընկերութիւնը, 500 օրինակ յատկապէս կը տպագրուէր, ուրիշ գոյացած արդիւնքը - 200 ոսկույ համարժէք - վերոյիշեալ շրջաբերականով Հ. Բ. Ը. Միութեան կը նուիրուէր .

Արտասահմանի շատ մը թերթերը հրատարակած ունին յիշեալ շրջաբերականը 1906 Փետրուար և Մարտ ամսոց թիւերուն մէջ .

Հանգուցեալ յոգնալատակ գրագէտ, և բազմաշարք հրատարակող Եպիսկոպոսին այդ հոյակապ երկասիրութեան հրատարակութեանը՝ առանց ո՛ր է օրինաւոր պատճառի . . . ընդգիծացան և արգելք հանգիսացան, նախ՝ Ամեն. Իվրիւնան Սրբազան «Երկասիրաց Պատրիարք»՝ որուն գրաւոր դիմելով 1905 Օգոստոսի սկիզբները, հրատարակութեան ձեռնարկելու կը ծանուցանէի՝ ու իր բարոյական օժանդակութիւնը կը խնդրէի : Չորս ամիս յետոյ Ազն. Տիար Միհրան Թեւեանի հասցեով, Ն. Ամեն. Իվրիւնան Սրբազան ԱՐԳԵԼԱՐԻՍՅԱՆ պատասխանողի մը կ'ընդունէի . . . Եւ յետոյ՝ առ հիւ իվրիւնան Սրբազանի ԿՈՒՍԱԿՅԱԿՄՆ հետեորդներուն, Գերապատիւ Եղիշէ Արքեպիսկոպոս Ապահունի ընդգիծացաւ, որ նախագահութիւնը ստանձնած էր այդ հրատարակութեան համար կազմուած Մասնախումբերուն . . .

Չեմ գիտեր թէ այս երկու հրատարակեալ անձնաւորութիւնները, ու

րոնց գէթ հայերէն լեզուի մէջ ունեցած հմտութիւնը տարակոյսի ներքե չէ, մինչև հիմայ գրական ինչ արտագրութիւն կրցած են նուիրել ազգին, որ իրենց հմտութիւնը սղարակցին յայնչափս չահեկան և կարևոր մէկ արտագրութիւնը ճշգրտոր հանելու ամենագլխաւոր պատճառները դարձան, իրենց սղարակութիւնը չարաչար գործածելով՝ և իրենց միամիտ հետեւողները յանդուրձան ինծի գէթ գրգռելով, և այսպէսով զբուկելով հայ համայնքը հանդուցեալ բազմահմուտ և պիտակաբոսին յոյնատանջ աշխատութիւնէն յառաջ գալիք համայնատարած լոյսէն և յայ պայմաններուն մէջ պիտի ձեռք բերենք մեր ազգին յառաջդիմութիւնն ու լուսաւորութիւնը:

Բայց հոս չ'ընթացաւ տակաւին այս քստմնելի եղբերդութիւնը. քիչ մնաց որ այդ երկու ազգեցիկ անձերուն նախանձի և հակառակութեան զգացումը գէտի իրենց հանգուցեալ եղբայրը, շարք մը ըսպանութիւններու ալ տեղի պիտի տային: Աւ չեմ քաջուիր այս առիթէն օգտուելով ի Պօլիս Ամեն. Իզմիրեան Սրբազանին յանձնարարել կտրիճ մը՝ որ մահամերձ հիւանդ մ'է, տարագրելոց խուռներամին մէջ անշուք, և սա՛ իրենց մէկ ուրիշ ճշմարիտ զոհն է: Եւ շատ չ'անցնիր, որ ն. Ամեն. Իզմիրեան Սրբազան՝ երբ ըլլայ Կաթողիկոսութեան ըլլայ Պատրիարքութեան գահերէն մին բարձրանայ, որուն համար հակառակող մը չեմ, որովհետև այդ սրբազան պաշտօնին համար ո՛ր և է ընտրելի չունիմ ներկայացնելիք, պիտի յանձնարարել համարձակիմ ուրիշ զոհ մ'ալ աւելի՝ «վերաւորեալ» քան զուսկինն:

Իմ մտիս՝ որ ըստ իմ կարի՛ հանգէպ իմ նմանեացս ունեցած պարտականութիւններս կատարել չանալէ զատ, ո՛չ աշխարհի հարստութիւնները, ո՛չ փառքը, ո՛չ համբաւը և ո՛չ այլ ինչ կը հետաքրքրեն և կրնան հրապուրել զիս, պէտք է ըսել «բարեբաղդաբար» տասն և չորս ամսուան տաժանելի՛. օ՛հ. բերք բերոյ տաժանելի բանտարկութիւնով մը յանձն առի գոհացնել զիրենք. մեր երկու մե՛ծ՝ հռչականուն, յառաջդիմասէր, ազատասէր, բայց ստէպ սխալելու պատրաստ գէմքերը. Իզմիրեան «Հայրելի» և Ապահունի Եպիսկոպոս. միասին առնելով իրենց համբաւն ու անունը շահագործող շարամիտ, սինըրոյ՝ և մեծադոյն մասամբ սղէտ և կոյր հետեւողները. . . այս վերջոց:

Հանգուցեալ բազմարդիւն և պիտակաբոսին երկասիրութեան ձեռագրին գալով, որ ինչպէս ըստեցաւ, երկու ստուար հատորներէ կը բաղկանար, մին՝ երկոյս կնքուած և ի պահ տրուած էր Մեծ. Նշան և Արեւմտադով Հաճէթեան - ինծի համար գէթ այս պարագաներուն մէջ - պատուական և ազնուասիրտ եղբայրներուն քով, որ մինչև ց'արդ անպարտ կը մնայ կնքուած. իսկ միւսը՝ առաջին հատորը՝ երես 1-372, որուն 110 էջերը հրատարակուած են, սեղեդոյ Առաջնորդին և Առաջնորդարանին կողմէ կատարուած սխալութեամբի բռնաբարմանց շնորհիւ, իրենց «տրամադրութեան» և «ձեռ-

քին» մէջ կը գտնուի, ուրիշ շատ մը կարևոր թուղթերու՝ և կողպուտե՛ ու աւարառութե՛նէ աւելցած զոյքերու հետ:

Հիմայ որ ամենալ պատենք, մենք՝ և ամեն անոնք որ բռնութեան շղթային ծանրութեան ներքե կը հեծէին, հիմայ որ Իզմիրեան Սրբազան աքսորական մը չէ որ իր-նայեմ, ինչպէս՝ ես գիտեմ թէ ինչ անպատմելի գուրգուրանքով մը խնայած եմ միշտ ասկէ առաջ, հիմայ կ'ըսեմ որ «գաղտուկ բաներ» ընելու պէտքը չունինք, Իզմիրեան Սրբազան պիտի ուզէ՞ և պիտի փութա՞ զարմանն իր այս ԱՀԱԳԻ՛ն, սրբալինքը, որ յանդուրձան գործեց ու զործել տուաւ, կամ իր անուճիկ գործուցան. . . և սակաւին կը շարունակուին ալ, բայց անտարակոյս նեղ սահմաններու մէջ:

Հ. Բ. Ը. Միութեան կազմութեանը որոշ թուականը առիթ ունենալով՝ այսչափ սխալուել խնդիրներով զբաղելը, ազգային համար թերեւ իր շահեկանութիւնը ունենայ, բայց առ այժմ ասկէ աւելինքը ըսել ներքի չէր. . .

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ս Տ
Բանաւոր պատճառաւ մը՝ այս թիւով հրատարակուելը խոստացուած ՅԱԻՆԵԼՈՒՄԸ՛ յետաձգուեցաւ:
Իր Կարգին կը բացատրուի ասոր պատճառները: ԽՄԲ.

ՃԱՄԱՍՏԻՆ ԸՍՄՆԵՐԸ
«Բարոյական տուամի մը առիթ»
13 Սեպտ. 1908

Թխպանո՛ւ անպիտ զրոհն տե՛հ շուս՝
Թափեղու յ'տիկեց ծրծռելք, հոտ, կարկուտ
Աշխարհու և եղբ' ճիշտ Սոդոս Գոմար՝
Չի կայ մի արդար՝ հոգի երկուտ:

Կղերկն շատե՛ր չիրք ու կեղծաւոր,
ՀՈՍԱՆՔԻ՛ն շարուած՝ քրճիկն առնել օր.
Էպիկեր սննել, մեղիքն գունակող,
Անխնայ գործե՛ն յրպիշ ու ջրգեղ:

Կիկն ըսես հապա՛ւ եղած է զգալն,
Խաբի ու սրճե՛ խօսքով զանազան,
Մայրն ու եղբայրը, անկեղծ երիկը,
Գարշաւի ազդե՛ ինչ, երբ լրեսն զիկը:

Ա՛յ չի կայ օրեկի, չի կան մարգարեի,
Գիտի աւեսարան, Սաղնու ու Նարեկի,
Իրուած են մեկի՛ ջուճիկն գորտիկն,
Ամեն կողմ բարեկ. շարիֆ, խաղիտքիւն:
Սղարեց
Դանիրե՛ Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷ՛Ն

Հետեւեալ նամակը՝ որ «Մալէզեան» . . . նոր կուսակցութեան մը կազմութեան շուրջը կը գառնայ, առանց ամբողջ բովանդակութեանը համաձայն ըլլալու՝ կը հրատարակենք, գիտնալով որ Մալէզեան անկազմելի կուսակցութեան կազմութիւնը՝ լոկ ՄԱՍՆԱԻՌ և ճղճիմը պատակներու և գձուճ հաշիւներու պիտի ծառայէ. . .

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ՝ մարմնացում գտնելու գրեթէ մօտ կարծուած խորհելակերպ մը որ՝ երկար տարիներ շարունակ հատուածի մը մտասեւեռումը կազմած ըլլալով, այս օրերս կը հրապարակուի վերջնականապէս հանրային կարծիքին առջև ծրարային յոգեւածաշարքի մը սողանքով՝ իր քստմնելի տարտամութիւնէն՝ գէտի իրականացումի հանդուրձանը:
Գաղափարներ, որոնք՝ երբոր կը ծնին մի քանի խորհողներու կողմէ, և համապատասխան են ժողովրդի մը իրա-

կանութեան որ և է մէկ օգտակար կողմը շոյափելու, ասոնք անխուսափելի իրենց յաջողութիւնը կուսենան և՛ շատ քիչ ատենէն բազմութիւն հետեւողներու ամբողջութիւն մը զոյսացնելով ծառայ կ'ստանան:

Սրովհետեւ՝ պահանջ մը ամբողջացնել կը ձգտին այդ յոգեւած գաղափարները, որովհետեւ՝ սերտ առնչութիւն մը կուսենան ասոնք ժողովրդի ապրած կեանքին հետ, և վերջապէ՛ս բան մը կայ անոնց մէջ խոհականօրէն նկատի առնուած և յարմարեցուած ժողովրդի ներկայ պահանջներուն հետ, ասոնք: Կը մնան յաւէտ ասէն խաւերու համար է՛ն սիրուած և քաջալերուած Գաղափարական ընկերակցութիւնները:

Իսկ ասոնցմէ զուրս, ի՛նչ քաջալերութիւն և ընդունելութիւն կը զբաւենն այն կարգ մը թէ՛օրիական, անիրականանայի մտածողութեանց արդիւնքները - գործնականութիւն ստանալու սեռակէտէն - արտասահմանի մեր այս զմեզակ՝ բայց փորձառու կեանքին մէջ քիչ թէ շատ արդէն գաղափար մը զոյսացուած ենք կարգ մը անօգուտ՝ ժամաւաճառութեանց ականատուր եղած ըլլալով:

Տիար Վ. Մալէզեանի հրուէրով, անցեալ զիշի բաւական հետաքրքիրներու խումբ մը, Լսարան Ընթերցատունը գրուած էր, իմանալու համար այն բացատրութիւնները որոնք՝ նոր կազմութիւնը «Յառաջդիմասէր Ընկերութիւն» ծրարի յօդուածաշարքին վեճականութիւնովը պիտի պարզաբանուէր:

Տիար Վ. Մալէզեան, իբր հեղինակ այդ ծրարին, յատկաբանով մը մեղի բացատրեց նորակազմ ընկերութեան ընկեր գերը Հայ բարեշքուած նոր կեանքին մէջ, ուրկէ իմացանք թէ կազմակերպուելիք ընկերութիւնը ո՛չ թէ բարեգործական այլ՝ կուսակցական ընկերութեան բնագործը պիտի կրէր:

Ի՛նչ, ուրեմն կուսակցութիւններու մէջ կուսակցութիւն մ'ալ աւելցնելու միտումը, այսինքն շարք մը նորօրինակ տխուր անհարկութիւններու նախադուր բանալ, պատակով այնքան բաղձացուած մերձեցման մօտիկութիւնը կուսակցութիւններու ներկայ համբաւը գործունէութեան մէջ, այդ ալ այն տեսակ հաւաքոյթի մը ներկայութեան որուն կազմութիւնը, շատ քիչ չեղորներութիւն մը կը ներկայացնէր: Մրազրի յօդուածներու մի առ մի ընթերցումը բաւական լայն վիճաբանութեան ձեւը առաւ և՛ ընդդիմադրականութեան մանրազնին քրքրութիւն տակ բացայայտուեցաւ թէ, այդ նորակազմութիւնը կուսակցութեան ծրարի պարունակութիւնը խառնուրդ մ'էր, իր նպատակին հակառակ յօգուածներու, այսինքն կուսակցական կազմութիւն մը շփոթուած է հոն բարեգործական նպատակին հետ, որով պէտք է զտուած որոշումի ենթարկել զայն, անոր ինքնութիւնը քննորոշելու համար: Եւ պահանջուեցաւ որ աւելի բարեգործական ընկերութեան մը ձեւը սրուի քան՝ որ և է կուսակցութեան մը: Սրովհետեւ վերջոյն մէջ յաջողութիւնը շատ կասկածելի և երկբայական է, և՛ կրնայ անխորտ ճեւտիկութիւններ պ ունենալ:

Իսկ բարեգործական կամ բարեպիտական հողի վրայ գրուած ընկերութիւն մը ունենալը փոփոքելի է թէ կուսակցականանիլ և թէ հանրային Ազգէն, նա մշտնապէս ներկայ պարտաներու մէջ անոր գերադասութիւնը անվիճելի կըրնայ համարուի:

Տիար Վ. Մալէզեան թէեւ պայտպանել ջանաց իր հեղինակութիւնը, բայց ընդդիմախօսներու հիմնական ու փաստացի քննադատութիւնները այնքան զօրաւոր էին որ, չարաւոր հակուժ մը մէջ գրուած նկատեցինք իր սեփական ուրոյն մտածողութիւնը:

Եւ կը յուսանք որ անանկ եղած ըլլայ, որովհետեւ իր մէջ տեսնուեցաւ կամքի ուժ, յամառ բնատրուութիւն մը կազմակերպելու: Սակայն կը ցաւինք ըսելու թէ - իր ըստին յենլով - ամէն 5 հոգով սկսուած գործ չի կրնար յառաջա-

նալ՝ եթէ երբեք այդ 5 հոգիոնց շրջանակէն բղխած գաղափարները իրականութեանց բարեքումին չ'համապատասխանեն:

Յարգանքով
ՆՇԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

Տիար Պ. Յովսէփեան. Տիկին Մ. Յովսէփեան. Տ. Յովսէփ Յովսէփեան. Տիկին Կ. Փափազեան. Այլի Տիկին Վ. Գէորգեան. Տիար Վ. Կարապետեան ցաւ ի սիրա կուգան ծանուցանել դառնաղէտ մահը

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՀՈՒՓՈՒՍԷ ԿԻՐԻՆԵԱՆԻ (ՆՆՅԱԼ ՅՈՎՍԵՓԵԱՆ)

Իրենց քրոջ, կեսրոյ և մօր քրոջ որ տեղի ունեցած է ի Վիէննա, ի հասակի 54 ամաց, և կը խնդրեն իրենց ազգականներէն և բարեկամներէն, որ հաճին ներկայս ընդունել իրեւ ծանուցադիր իրենց դառնաղէտ կորստեան:

Գահիրէ 22 Փետ. 1908

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ն. Ն. Ն.

ԱՐՁԱԳԱՆԻ ԱՐԻԻԵԼԻԻ
— Պ. Յ. Ալիբաբա չ'լուէ. ուսականը չի՛ խօսի: Աբրահամ էֆ. Այլազեան, Երուսաղէմի մնայուն ուխտագնացը՝ արժանաբիւն ստացած է հրատարակելու իր եղբոր՝ զաւեշտագիր բայց ո՛չ կենսագիր՝ Գէորգ Այլազեանի «Մամուլը»:

Կար և յաջողութիւն կը մաղթենք Տ. Ա. Այլազեան հեղինակաւոր կենսագրին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արեւելքի Յարգելի Խմբագրապետը Տ. Եր. Սրմաբէշխանլեան ցնցող քանի մը տուրքով «Վարդաւան ընտրութիւններուն» վրայ կը խօսի և կաւարտէ հետեւեալ բառերով:
«Վերջապէս պէտք է որ վաղը հայ ընտրողները այնքան խղճամիտ, այնքան խղճամիտ, այնքան աշաւուրլ և պատասխանատուութեան բաժինին այնքան գիտակից ըլլան որ՝ ետքէն ազգը պարտաւոր չըլլայ լուծելու կազմութիւնը երեսփ. փոխովը, եթէ ան բաղկացած ըլլայ անարժան, անյարմար և անպիտակից տարրերէ:

ԱՐԵՒԵԼԻԻ ԹԵՏԹՈՆԸ
«Արեւելք» Պօլսոյ հայ Գոմիութիւն հաւանութիւնը առնելէ յետոյ, սկսած է իբր թերթի մը հրատարակել Բաֆֆիի Մամուլը:

Մամուլը «Արեւելքի» պէս բոլոր հայերէ ընդունելութիւն գտած թերթի մը մէջ տարածելուն օգտակարութիւնը կը հասկնանք. և թէ անհասկանալի բան մը կայ, այն ալ՝ փոխանակ Այլի Տիկին Աննա Բաֆֆիէն արտօնութիւն առնուելու - որ Լոնտոն կը գտնուի, Կարտոն Բարդ 32 - Հայ Գոմիութիւն առնուելին է: Դիտողութիւն մը չ'պիտի կարենայինք ընել, եթէ Բաֆֆիի որբերը որ հիմակ անշուշտ շնորքով երեստարգանք եղած են, հայ Գոմիութիւնը մտուցած ըլլային. բայց Բաֆֆիի հեղինակութիւններն էին որ զանոնք մեծցոյցին ու դաստիարակեցին:

«Արեւելք» կրնուի անշուշտ որ՝ երբ ՈԱՄՈՒԿԸ իբր թերթի մը հրատարակուի, այլևս ա՛յնչպի շատ փնտառուած Մամուլը, նուազ պիտի փնտառուի և «Իրաւունքի բռնաբարման» խնդիր մը կը ծագի՝ ուրուն պատասխանատուն փոխանակ

իր վրայ առնելու « Արևելք », Հայ Գործիքներ վրայ կը նետէ, առանց հայ գործիքին անդամներուն որոշ անունները տալու : Արդեօք պիտի կրնանք մտածել թէ՛ գործիքին Բաֆֆիի Այրիի և զաւակներուն իբրև անուանիքները ոտնակոխ ըրած կըլլայ, իր մէկին հաւանութիւնը շնորհելով Արևելքին, առանց կանխաւ գրաւոր և օրինաւոր հաւանութիւնը առնելու Այրի Տիկին Բաֆֆիին և զաւակներէն : Այս նկատուածիւնը Արևելքի յարգելի Խըմբագրականին ուշադրութեանը կը ներկայացնենք, ինչպէս անիթը ներկայացած ատեն իրենց կողմէ տեղի կանխաւոր այս ու այն կողմէն եղած գանգաւորներուն վրայ Օսմ. գործիքին ուշադրութիւնը հրաւիրուիլը :

ԱՆՍԱԿՆԱԿԱՆ ՄԸ
Գարձեալ « Արևելք » 6886 թուով Աղէքսանդրոսյէն Տիար Լեոն նիզամեան, զբաղան ամէն սրժանիքներով օժտուած նամակ մը հրատարակելով, կը հրաւիրէ հայութիւնը Հ. Յ. Գաղանկութեան համար հանգանակութիւն մը բանալու :

Կը յուսանք թէ այս կողմ որ այնչափ գեղեցիկ ոճով մը խմբագրուած է, արդիւնաւոր հետեանքներու պիտի յանգի :

ՀՆՁԱԿՆԱԿՆԵՐԸ

Կ. Պօլսոյ Հնչակեան մասնաճիւղը յատուկ դատական Յանձնախումբ մը կազմած է, որ զանազաններու շուրջ պատու խնդիրները պիտի քննէ :

Իր առաջին գործը Տիրայր Վարդապետին շուրջը դարձող խնդիրներուն քննութիւնները պիտի ըլլան, որուն համար հրապարակային հրաւեր ուղղուած է, որպէսզի « զբաւոր ցուցման քննող » ներկայացնեն Մեծ նոր խան, վերի յարկը թիւ 2 :

Տարօրինակ տարօրինակ, վարդապետի մը գործերը քննութեան առնուիլը Պատրարքարանի թիւ 2 սենեակին մէջ տեղի ունենալը հասկնալի է, բայց Մեծ նոր խանի թիւ 2ը ի՞նչ կը նշանակէ արդեօք . անխոխանակաւորութիւն :

Մէկ արդարացուցիչ պարտոյ միայն կայ . Պատրարքարանը թեբեւ չափազանց զբաղեալ ըլլալով՝ ժամանակ չունի Տիրայր վարդապետին գործը նայելու . . . և զայն արդարացիաբար կամ պատժելու : Կեցցէ՛ Հնչակեանութիւն ու Իրօշակեանութիւն, ու ամէն « ուրիշ » . . . ու ամենէն յետոյ՝ կեցցէ՛ ազգային օրինաւոր իշխանութիւն . . . և օյնիպարոնքիս :

ՀԱՅ ՊԱՊՈՒԿՆԵՐԸ

Արևի մէջ « Հայ պապականներ » վերաբրով յօդուած մը գրած է մեր բարեկամը Լեոն Մկրտչեան, որով կը մեղադրէ հայերը թէ ինչո՞ւ Պօլիս « ԿԱՅԻՆ » ու այն տեղ իրենց բանակը դրին Դաւաթիոյ եկեղեցւոյն մէջ, և արդեօք կըլլան կեդրոնական վարժարանի բացուելուն :

Ասիէ առաջ « Արշալոյս » քանի մը Տիֆլիսի միջադէպեր հաստատելով գրեց թէ՛ ինչո՞ւ « ԴԻԿԵՑԻՆ . . . » քաղաքական ! ! ! տարագրեալները որոնց մէջ Տօլմաճի Զաֆեու Աղաներ ալ շատ կային . . .

Հիմայ ըսենք թէ ինչո՞ւ զրկեցին :

Դրկեցին՝ որովհետեւ դարձի վրայ եղած ըլլալին հաստատելու պէտքը կար . . .

Դրկեցին՝ որովհետեւ « Արևի » մէջ հրաւեր կարգադրեցաւ, և զարմանալի է որ այդ թերթին պատուակալ խմբագրողը, Պ. Լեոն Մկրտչեան իր գրածէն զլատ՝ թերթին միւս մասերը չի կարգար եղեր . ու

յետոյ միեւնոյն թերթին մէջ, իրենց հրաւերին անձնախորհրատ պատասխանողները « պապականներ » կ'անուանէ . . . Արդեօք պատուոյ սուրին մասնակցութիւնը ալ « պապական » պիտի մկրտէ :

Դրկեցին՝ որովհետեւ այդ պատրուակով և առիթով ուրիշ զԵՐԿՈՒԵԼԻՔՆԵՐ կային :

Դրկեցին՝ որովհետեւ Գործիքին տիրանուն հայ պարտը դրամի փոխի պէտք ունէր, և միջոցները պակասած էին վերջերս . . .

Դրկեցին ու զրկեցին, « պապականներ » . . .

Յեռ գրութեան . - Տր. Նէճճէտաին պէյին մասնաւոր թեղագրանքներով րիկոյած հայերէն ոմանք ատնադիր առնելով Հոս մնացին, իրենց թուղթը ուրիշն փոխանցելով մէկ քանինք ալ անշնալով դիմում չըրին. հետեաւք լուրին այդ մասը սխալ հաղորդած են ձեզի բուն, պապականները . . . ո՞վ Տիար Մկրտչեան :

ՀԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ ՏՈՒՑԱԿ . Գ .

Արաբկիրի կարօտելոց Հանգանակիչ Մասնախմբի անգամ Տիար Գեորգ Պէրպերեան յատկապէս Թանթա, Զակաղիկ և Մանուրա երթալով հետեալ գումարները հանգանակած .

Նախորդ Ա. և Բ. ցուցակներու գումարն 3545 դահ. ողլ :

ԹԱՆԹԱ . - Տ. Տ. Կ. Էտրեմեան 97 դր. 20 փր. Գրիգոր Տէր Միքայէլեան 60, Տր. Էնֆիլէճեան 40, Ոմ 30, Գ. Ս. Տիւրկէրեան 20, Լեոն Սարաֆեան 20, Ոմ 20, Յազար Սահակեան 20, Պ. . . 20, Վարդան Պապեան 10, Տիգրան Պապեան 10, Լեոն Սարգսեան 10, Սարգիս Կանանեան 10, Կ. Եսայեան 10, Ոմ 10, Բերր Պաղտասարեան 10 Ս. Վայնաչարեան 10, Պօղոս Մաչիկեան 10, Ոմ 10, Անդրանիկ Բաղդասարեան 10, Ոմ 10, Յարութիւն Նազարեան 5, Առաքել Գարագաշեան (Մասալէ Գէպիլէ) 100, գումար 552 զր. 20 փր. :

ՉԱԿԱՉԻԿ . - Տ. Տ. Ճիւրճեան եղբարք 150, Անթոն ֆոթի 30, Յ. Բարբերթեան 20, Գրիգոր Շահեան 20, Գեորգ Գասպեան 20, Մաչիկ Ասատուրեան 20, Ս. Թէրզեան 15, Յ. և Կ. Աբէլեան 15, Սարգիս Բարթամեան 10 Տ. Էսիկեան 10, Կրկիս Աւլան 10, Արշակ Երեցեան 10, Գրիգոր Աղազարեան 10 ; Յովհաննէս Սանտալեան 10, Կարոպետ Այնանեան 10, Ազն. Կամարական Եղբարք Գործարանին մէջ հանգանակուած Մարտիրոս Էֆէնտի ծիէրճեանի ձեռամբ 125, գումար 475 :

ՄԱՆՍՈՒՐԱ . - Տ. Տ. Գեղամ Տէր Միքայէլեան 60 ; Բարսեղ Գ. Պալքեան 50 . Դանիէլ Թէմուր 50 . Լեոն Մկրտչեան 30, Արշակ Զորպաճեան 30, Միսոբ Միմիան 20, Կարապետ Նէվրուզեան 20, Պետրոս Զաղմաճեան 20 . Տր. Սիմոն Մինաս 20 . Եղիա Պաթմեան 20, Ոմ 20, Վ. Սարաֆեան 20, Վահան Կիւլլեան 20, Վարդան Պարտեան 20 . Պետրոս Տէր Յակոբեան 10 . Տ. Պէղճեան 10 . Անթոն Սապաղեան 10 . Լեոն Կիւլլեան 10 . գումար 480 :

Գումար Ա. և Բ. և Գ. ցուցակներու 5052, զր. 20 փր. :

ՆՍՄԱԿԱՏՈՒՓ

Իզմիր, Լեոն և Արամ . - Ձեր դրկած նամակը եւ թերթը ստացուած է : Տեղագրած Սրբազանի մասին Ձեր գրածները լատիոյն է որ տեղւոյ « Արշալոյս » ին մէջ ամբողջացնէք, քանի որ անոր 135րդ թուով սկսուած է : Ձեր յօդուածը մեր կողմէ չ'հրատարակուելու պատճառներէն մէկն ալ

այն է որ՝ հեռաւորութեան պատճառաւ տեղւոյ վրայ չ'ենք կրնար քննութիւն կատարել « ըսուած » ներու մասին :

Ատանա Տ. Ե. - Ձեր նամակին պատասխանուած է : Նոր նամակի կսպասենք :

Կարին Տ. Զ. - Ձեր փափաքին համաձայն զրկուեցան թերթերը :

Պոլիս Ս. . . - Այս բովանդակ նամակ ունիք : Ձեր ցոյց տուած հասցէին դիմեցէք :

Յ Ե Ռ Ա Գ Ի Ր

Կ. Պոլիս 16 Սեպտ. - Սուրբանիկ հեռագրով Էնուարս քաղաւորը՝ իր Գասակալաբիւր շնորհաւորեց, ըսելով թէ՛ « Սահեակալութեան հոշակունիկ յետոյ իր առաջին սարկարձնեալն ալ » և պէտք է յուսալ որ, Ձեր Բարձր Եպարֆոսի Վարչութեան ներքեւ Ձեր Կալաւորութիւնը խաղաղ և բարգաւաճ ապագայ մը կունենայ և Ձեր Վեհախառնութեան համար կ'ապահովուի ապագայ սերունդին մեծարանքը :

Կ. Պոլիս 17 Սեպտ. - Նոյի Պագարի կառավարիչ Սիւրիան քաւա իր գրիտեան յարձակումը կրեց և Աւստրիական զօրեղեկ պաշտպաններով Ակրալ գնաց :

Կ. Պոլիս 18 Սեպտ. - Կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ Բանաստեղծական պաշտօնէից անասիակները վճարելը :

Ճամբուած պաշտօնակներու գրաւոր ձեռքերու համար գնակալներ ծրարներ կ'ուսումնասիրուի :

Կ. Պոլիս 19 Սեպտ. - Ընդդիմադիր կուակցութեան պէս Պ. Ռայի Մանասըրի մէջ 10.000 հոգիներու կողմէ, որոց մէջ երիտասարդ Թուրքի և պաշտօնատեր ալ կային, խանդավառ ցոյցերու առարկայ եղաւ : Ասեկախօսութեան մը մէջ Պ. Ռայի ըսաւ թէ քաղաքին և յոյներուն մէջ անկեղծ համերաշխութիւն մը Պետրեան վերանորոգիլ շարժումը գրաւակներն է :

Կ. Պոլիս 19 Սեպտ. - Արեւելեան երկարուղեաց պաշտօնակներու գործադուրը Պոլսոյ և արեւելեան երկարային հաղորդակցութիւնները ընդհատուելու պատճառաւ Կառավարութիւնը միջոցներ հանուստեղծութիւն մը գոյացնելու համար :

Արեւի 19 Սեպտ. - Սուրբանիկ Երեւանի անսահման շնորհակալութիւնը իր պակասի, Թուրքիոյ և Անգլիոյ յարաբերութիւնները սերտանալու մէջ անոր մասնակցած բարոյ ծառայութեանց ի վարձատրութիւն :

Ս. Բեքիւսարի 29 Սեպտ. - Բօլիւրայի 1450 նոր դեպիտ հաստատեցան անգլի շարքու, միւսը հաստատ շարքուն 200 էր : Այս դեպիտներու 100 ին 25ը մասնաւոր է :

Կ. Պոլիս 21 Սեպտ. - Արեւելեան երկարուղեաց գործադուրներու արտադրութեան քանակներու պատճառաւ, ուսիկանակ նախարարութիւնը միջոցներ աշխատեցնելու վերաբերելու համար, հակառակ արտադրիչի մէջ զիրեկ հրամարտեցնելու պատճառով :

ՎԱՐԴ ԵՒ ԶԱՐԳ

FABRIQUE
de fleurs artificielles
POUR BOUQUETS DE NOCES, FANILLES,
COURONNES ET FLEURS DE CHAPEAUX
M^o & S^o Tchelekeoff

ՏՐԻԿՆ ԼՈՒՍՏԻԿ Պ . ԶՈՒԱՐՅՈՍ
ՍՈՒՍԲԻ ԵՐԱՍ ՄԻՆՁԵՅԻՆ
ԼԱՏԻՆՍԻ ԵԿԵՂԵՑԻՆՈՅԸ
ՃԻՇՏ ԴԻՄԱՏԸ
ԱՐՈՒՅՍԱԿԱՆ ՏՄԻԿԵՐՈՒ
ԱՐԵԼԵՅԻ

Հարսանեկան գեղակազմ պարզեցնելու, շքեղ ծաղիկեղջիւկներու, պսակներու և բոլորիքի (շափղա) հրաշագեղ ծաղիկներ ունենալու համար մի դիմէք այսուր :

Մեր գիները դիւրամատակ են և ապրանքները անմրցելի :

Փորձի համար անգամ մը այցելու զը, ապահովապէս մեր միայուն յաճատորը պիտի ըլլայ :

Մեր տարիներու փորձառութիւնը այսպէս ըսել կուտայ մեզի :

31-43 ՏԻԿ . Լ . Պ . 201ԱՔՅԵ

ՍԵՂԱՆՍՈՒՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Մուսի փողոց թիւ 6, Սիմկրի մասնաճիւղին ֆով, Ժիւսքերի դիւնաց :

Կը գնէ և կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Բրէտի Յօնսիէի նիւն և նոր, Բուժէլի երկաթուղեաց և Բանամայի Ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գնեցնելու կրնան օգտուիլ Եգիպտարեան մեր ազգայինները մեզի դիմելով :

Մասնավճարներով - 25, 50, 100-կարելի է արժեթղթերու տիրանալ, և մասնաւոր պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, և առեւտրական ամեն կարգի Պոնտեր զեղջիւր պատրաստակաւութիւն :

Սեղանաւորական և Պորսայի գորգառնութիւններ և այս կարգի գորգերու վերաբերեալ գաւառներէն եղած Բանամարարժեթիւններ փութով կը կատարուին :

Բուժէլի երկաթուղեոյ վիճակահանութեանց պանդ Օթօմանէն երաշխաւորեալ և վաւերացեալ քոս Կաներեզնել ուղղորդուած համար լաւ պատահութիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ պանդ Օթօմանէն ուղղակի կատանանք յիշեալ քոսները :

12-50
ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

Գ Օ Մ Ի Թ Է Ն Ե Ր Ը
Ե Ի
Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ամէն նորութիւն, ամէն տեսակ նոր գիտ քիչ առնէն իր կեղծերը կունենայ հրապարակին վրայ : Գործիքներն ալ իրենց կեղծերը ունեցած են շուտով . և ասիկայ անհաւանական չէք :

Պօլսոյ թերթերը կը գրեն թէ՛ այս անպատեհութեանց առջեւ առնելու լուրջ ջանքեր կըլլան, և՛ Բ. դուրը նկատելով որ գաւառներուն մէջ կարգ մը անձեր ինքզինքին իբրև Օսմ. Գործիքին անգամ ներկայացնելով կարգ մը անիմաստ խօսքերով կը զրաղեցնեն քաղաքային ու ելմտական պաշտօնեաները, իտարիէ ժողովները ու դատարաններու անդամները պաշտօնանկ ընելու և հեռացնելու կը ձեռնարկեն, որով պաշտօնական և առեւտրական գործառնութիւնները կը յապաղին և պետական հասոյթներու գանձումը կը կասեցնելով որ վերագրել պատճառներով նախորդ տարուան միևնոյն ամիսէն շատ պակաս են ներկայ տարուան նոյն ամսուան հասոյթները, նկատելով որ ելմտական նախարարութիւնը գաւառներէն դրամ կուզէ զինւորական ու տեղական անհրաժեշտ ծախքերուն համար և նկատելով որ այս պարագաները բոլորովին անհամապատասխան են կայս. Կառավարութեան հաճութեանը և Օսմ. Միութեան և Յառաջգիւրմութեան քննկրութեան նպատակներուն ու ընթացքին, ուստի Բ. դուրը ծանոյց պատերազմական և ելմտական նախարարներուն և բոլոր նահանգներուն և անշատ գաւառներուն, որպէսզի ինքզինքնին իբրև նոյն ընկերութեան անգամ ներկայացնող և այդ կարգի անվայել ընթացք ունեցող անձանց նրկատմամբ հարկ եղածը ի գործ դնեն

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՓԵՍԱՆ ԵՂԲԱՐՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷՓԵՍԱՆ ԵՂԲԱՐՔ

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարէթներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարտական ամենաընտիր թէմպէքի սյլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրոտօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

և ելմտական պաշտօնեաներն ալ զանազանները հոգածութեամբ և ուշադրութեամբ կատարեն :

— Աստիկանութեան պաշտօնաբանին մէջ յանձնաժողով մը կազմուած է, որ դատարկապարտներու մասին քննութիւն պիտի կատարէ և այդ կարգի անձերը Կ. Պօլսէն պիտի հեռացնէ :

Ծ. Խ. — Օսմ. Գօմիթէին և Հայ Յեղ. Դաշնակ. ուշադրութիւնը կը հրաւիրենք, այս և երկանց ըսկզբնաւորութեանը վրայ :

— Կը խօսուի թէ՛ Պօլսոյ մէջ պետական պաշտօնեաները և Պահպանողական ակումբը մը պիտի հիմնեն, նպատակ ունենալով պայքարելու Երիտասարդ-Թուրք կօմիտէի կողմէ պաշտօնեաներու կամայականօրէն հրաժարեցումէն թաքթիքին դէմ : Ակումբը նպատակ պիտի ունենայ նաև արգելել կօմիտէի միջամտութիւնը՝ պետական գործերուն : Ծ. Խ. — Հայերու մէջ ալ այս կարգի հաստատութիւն մը շահեկանութենէ զուրկ չ'պիտի ըլլայ :

— Պօլսոյ թերթերը Սելանիկի Երիտասարդ Թուրք կօմիտէին հեռագիր չըջարեցական մը ստացած են, որով խստիւ կարգի լուրի այս ու այն նիւթին վրայ աղաատրէն գրել :

Այս առթիւ Պօլսէն ևս Օգոստոս 23 թուականով հեռագրուած է հետեւեալը . « Թուրք լրագիրները այս հրահանգին վրայ՝ ո՛չ կօմիտէին հեռագիրները հրատարակեցին և ո՛չ ալ անոր հրամանները գործադրեցին : Թուրք հրատարակագիրները ժողով մը գումարելով որոշում մը քուէարկեցին, որով կը յայտնեն թէ կօմիտէին իրաւունք չունի « ՀՐԱՄԱՆՆԵՐ » արձակելու, այլ միայն կրնայ « բաղձանքներ » յայտնել :

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դոշնակցութիւնը՝ թէև քիչ մը շատ ուշ, « բայց եթէ անկեղծ է, » իր պաշտօնաթերթերուն մէջ հետեւեալ ուշադրաւ նախազգուշացումը կը հրատարակէ : Մենք զայն կ'արտասպենք՝ միշտ կրկնելով թէ՛ մեր մէջ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները բաւարար միջոց չունին նմանօրինակ անկարգութիւնները զսպելու, և շատ անգամ

« ենթակոծիտէ » ըսուածներն են որ չարիքի աղբիւր կը դառնան, մէկ կամ միւս անգամին ֆուսիստի զոհացնելու համար . . .

Մենք չենք վարմանար այս անտեղութեանց հանդէպ, հայ կուսակցութիւնները « դաւադրութիւնը » սրգեգրած են եղեր, և Հնչակեան կուսակցութեան — չենք գիտեր հիշք թէ վերակազմալը — Պօլսոյ գլխաւոր գործիչները իրենց ծրարելը հետեւեալ կերպով պարզած են եղեր . 1, Այլ ևս « ԴԱՒԱՐՈՒԹԻՒՆ » պէտքը վերցնել, քանի որ թուրքիս ազատութեան շաւղին մէջ մտած է՝ ևլն :

Ըսել է որ դաւադրութիւնը գոյութիւն ունի եղեր . այդ պարագային անկեղծութիւնը բացարձակապէս կը պակսի կուսակցականներէն :

Վերադառնանք Դաշնակցութեան նախազգուշացումին, որ անշուշտ թուղթի վրայ մնալու սահմանուած է :

ԽՄԲ.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ցաւելով կրտսեր որ մեր Կօմիտէներու հասած տեղեկութիւններ ազեղ եւ ստորին երեւոյթի մը գոյութիւն կը հաստատեն որուն դէմ յաճախ բողոքած են Յեղափոխական կազմակերպութիւնը :

Անբարեխիղճ, չափաւեր եւ առիթէն օգտուելու ընդունակ անձեր, մայրաքաղաքիս եւ գուցէ գաւառներու մէջ ալ սկսած են իրենք զիրենք զաշնակցական ներկայացնել, այս կամ այն Կօմիտէին պատկանող, եւ սոյն անունին տակ կը համարձակին յիշուածներ ընել, որով պահանջել, եւ նոյն իսկ սպառնալիքներ ընել քաղաքացիներուն :

Կազմակերպութիւնը վճռած է իր սաղմին մէջ իսկ խղրել սոյն օրինակ զեղծումներ, թոյլ չի տալ ո եւ է խաբէութեան արարքի եւ իր կանոնադրին վրայ յիշած, կը յայտարարէ .

1. Դաշնակցութեան անունով խաբէութեան ընողները պատասխանատուութեան պիտի կանչուին :
2. Դաշնակցութեան անունով դրամաշորութիւն ընողները, որոնք որ ալ ըլլան, խստօրէն պիտի հալածուին :
3. Դաշնակցութեան անունով սպառնալիքներ ընողները իբր զեղծարար անխընայ կերպով պիտի պատժուին :

Այս առիթով, ի գիտութիւն ամբողջ հայ ժողովուրդին կը ծանուցանենք որ այս տեսակ զեղքերու ժամանակ իրենց զանգատները անմիջապէս մեր կօմիտէներուն հարգողին :

Կը սիրենք յուսալ որ այս նախազգուշացումը պիտի կրնայ այդ խաբէութեանը սանձել, հակառակ պարագային ստիպուած պիտի ըլլանք ամէնախիստ միջոցներու կիրառմանը գիմել, պահպանելու համար Յեղափոխութեան անունը միշտ մաքուր անբիծ եւ վստահալի :

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պօլսոյ Պատասխանատու Լուրին 1908 Օգոստ. 8)21 Կ. Պօլսոյ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց . Գաթէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱԶԻՒԳԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկերներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիայակաւ եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաների լիմէ յաւցած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՂԱՊԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկերի յաւանդից



Գին 20ՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, Մինկեր մեքենայից համար, յաճախողատուներուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՕՐԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ

Գանթօ, Սուգուլ Մանկար 3 Թեթիկէր-Ել-Գալլաբի փողոց 3 Մանկախ Մզկիրին դէմը 3 Թիւ 3 Պանդուկապետ - Մ. Գէորգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուէտ գիրքով սոյն պանդուկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Գիմեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք :

Գինները չափաւոր են : 28-55

ՄԵՐ ԲՍԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեգիրներէն, նկատելով որ տարւոյն իններորդ ամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կը ըլլան մասնաւոր գիմուներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ :

ՆՊԱՐԱՎԱՃԱՍՈՒ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊԷԼ-ԽԱԼԲ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ գրծին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան շնորհիւ մնայուն զիրք մը բունած է տարիներէ ի վեր :

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախողները գոհ թողելու նպատակաւ սպասելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժանդրութիւն կընենք : Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է և մաքուր մեր քով :

Կշիտը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանդատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առնած է . վկայ մեր բազմաթիւ յաճախողները, որոնք միշտ գոհ մնացած են :

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիմեցէք ի Պապէլ-Խալբ՝ մեր վաճառատեղին և չ'պիտի զղջաք :

16-41 ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ